ԶԵԿՈՒՅՑ

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի իրականացումը՝ ներառականության և մատչելիության տեսանկյունից

Ծրագիրը ֆինանսավորվում է Միացյալ Թագավորության միջազգային զարգացման աջակցության շրջանակում՝ ՄԹ կառավարության կողմից և իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ կողմից՝ «Ուժեղացնելով Արևելյան հարևանության դիմակայունությունը» ծրագրի ներքո, որը համակարգում է Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտը (IWPR):

Հետազոտությունն իրականացվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն» կողմից, «Ռեստարտ Գավառ» երիտասարդական ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Հեղինակ՝ **Լենա Հովհաննիսյան**

Հաշմանդամային ոլորտի փորձագետ՝ **Կարինե Գրիգորյան**

Մոնիթորներ և ֆոկուս խմբային քննարկումների հարցազրուցավարներ՝

Նարեկ Արևշատյան

Մանվել Գևորգյան

2026

Հապավումների ցանկ

ԳԱԾ-Գործողությունների ազգային ծրագիր

ԿԽԱ օրակարգ- «Կանայք, Խաղաղություն և Անվտանգություն» օրակարգ

ՀԿ-հասարակական կազմակերպություն

ՀՀ-Հայաստանի Հանրապետություն

ՄԱԿ-Միացյալ ազգերի կազմակերպություն

ՄԱԿ ԱԽ-Միացյալ ազգերի կազմակերպության անվտանգության խորհուրդ

Բովանդակություն

Հապավումների ցանկ-1

Ներածություն-3

Համատեքստ

Մշտադիտարկման նպատակը և խնդիրները

Մշտադիտարկման մեթոդաբանություն

Հիմնական բացահայտումներ-7

- «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի մատչելիության բաղադրիչի վերլուծություն
- Վարդենիս համայնքում Ֆոկուս խմբային քննարկումների վերլուծություն
- Վարդենիս համայնքի պարզագույն թաքստոցների մոնիթորինգի վերլուծություն

Եզրակացություն-38

Առաջարկություններ-39

- Առաջարկություններ՝ ուղղված «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների ազգային ծրագրի միջգերատեսչական հանձնաժողովին
- Առաջարկություններ՝ ուղղված «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2025-2027թթ գործողությունների ազգային ծրագրի պատասխանատու համայնքներին
- Առաջարկություններ՝ ուղղված հասարակական կազմակերպություններին

Ռեսուրսներ-50

Հավելվածներ-51

Ներածություն

Սույն զեկույցը ուղղված է հաշմանդամություն ունեցող կանանց համար ՄԱԿ Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման ՀՀ գործողությունների ազգային ծրագրի արդյունավետության, մատչելիության և որակի մշտադիտարկմանը, ինչպես նաև ծրագրից բխող գործողությունների բարելավմանը՝ ապահովելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2475 բանաձևի դրույթների իրականացումը, որը կոչ է անում անդամ պետություններին առավել արդյունավետ կերպով պաշտպանել հակամարտության պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց՝ ապահովելով նրանց արդար,արժանապատիվ վերաբերմունք, արդար հասանելիություն հիմնական ծառայությունների և իրավազոր միջոցների նկատմամբ, ինչպես նաև խթանել նրանց լիարժեք մասնակցությունը խաղաղության գործընթացներին և հումանիտար գործողություններին (այդ թվում՝ ֆինանսական, առողջապահական, կրթական, հաղորդակցման և հասարակական կյանքի ոլորտներում):

Զեկույցը հիմնված է պատկան մարմիններին ուղղված գրավոր հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների և Վարդենիս համայնքի պարզագույն թաքստոցների մոնիթորինգի տվյալների վերլուծության հիման վրա՝ անդրադառնալով ծրագրերի ընթացիկ մարտահրավերներին և բարելավման հնարավորություններին:

ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1325 բանաձևը (2000թ.) կարևոր միջազգային իրավաքաղաքական փաստաթուղթ է, որը կոչ է անում պետություններին ապահովել կանանց հավասար մասնակցությունը խաղաղության և անվտանգության գործընթացներում, ինչպես նաև նրանց պաշտպանությունը հակամարտությունների և ճգնաժամային իրավիճակների ընթացքում: ՀՀ կառավարության կողմից ընդունված 2025–2027 թվականների գործողությունների ազգային ծրագիրը նպատակ ունի ապահովել այս բանաձևի դրույթների իրականացումը ազգային և տեղական մակարդակներում:

Միևնույն ժամանակ, կանանց տարբեր խմբեր ունեն տարբեր կարիքներ և խոցելիության մակարդակներ: Հատկապես հաշմանդամություն ունեցող կանայք հաճախ բախվում են բազմակի խտրականության և լրացուցիչ խոչընդոտների՝ կապված տեղեկատվության, ենթակառուցվածքների, ծառայությունների և որոշումների կայացման գործընթացներին մասնակցության հետ: Այս խոչընդոտները առավել ընդգծված են ճգնաժամային իրավիճակներում, ներառյալ արտակարգ իրավիճակները, տեղահանությունը և զինված հակամարտությունները:

Վարդենիս համայնքում իրականացված պարզագույն թաքստոցների մատչելիության մոնիթորինգը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների, փրկարար ծառայության ներկայացուցիչների, երիտասարդների և քաղաքացիական

հասարակության կազմակերպությունների հետ իրականացված ֆոկուս խմբային քննարկումները ցույց են տվել, որ առկա են համակարգային բացեր ներառականության ապահովման ոլորտում: Մասնավորապես, արձանագրվել են ենթակառուցվածքների մատչելիության խնդիրներ, ներառական տարհանման պլանների բացակայություն, ինչպես նաև պետական և համայնքային մակարդակներում ներառականության վերաբերյալ կարողությունների սահմանափակումներ:

Այս համատեքստում անհրաժեշտ է մշակել հստակ, ապացույցահեն և հասցեական առաջարկություններ՝ ուղղված պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ ապահովելու ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի ազգային գործողությունների ծրագրի ներառական իրականացումը:

Նպատակ և խնդիրներ

Սույն առաջարկությունների փաթեթը նպատակ ունի լուծել հետևյալ հիմնական խնդիրները.

1. Բացահայտել ներառականության առկա բացերը

Վերլուծել համայնքային մակարդակում առկա խոչընդոտները, մասնավորապես՝

- թաքստոցների և անվտանգության ենթակառուցվածքների մատչելիության մակարդակը,
- տարհանման և պաշտպանության մեխանիզմների ներառականությունը,
- հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության հնարավորությունները:

2. Նպաստել պետական և համայնքային մակարդակներում ներառականության համակարգային ինտեգրմանը

Առաջարկել գործնական և կիրառելի միջոցառումներ, որոնք կնպաստեն՝

- ներառական քաղաքականությունների մշակմանը և իրականացմանը,
- ներառականության չափորոշիչների ներդրմանը,
- պետական և համայնքային ծառայողների կարողությունների զարգացմանը:

3. Ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության խթանումը

Նպաստել հաշմանդամություն ունեցող կանանց ակտիվ և իմաստալից մասնակցությանը՝

- որոշումների կայացման գործընթացներում,
- խաղաղության և անվտանգության ծրագրերում,
- համայնքային մակարդակում իրականացվող նախաձեռնություններում:

4. Նպաստել ապացույցահեն քաղաքականությունների մշակմանը

Տրամադրել առաջարկություններ, որոնք հիմնված են համայնքային մոնիթորինգի և ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների վրա և կարող են կիրառվել ինչպես ընթացիկ ազգային գործողությունների ծրագրի իրականացման, այնպես էլ հետագա ծրագրերի մշակման ընթացքում:

Մեթոդաբանություն

Մշտադիտարկման գործընթացն իրականացվել է տվյալների հավաքագրման մի քանի մեթոդների միջոցով, որոնք թույլ են տվել գնահատել ծրագրերի և ծառայությունների արդյունավետությունը, ներառականությունը, մատչելիությունը, որակը և դրանց համապատասխանությունը հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների կարիքներին:

Մեթոդները ներառում են ֆոկուս խմբային հանդիպումներ, դաշտային մոնիթորինգի աշխատանքներ, հարցազրույցներ և գրավոր հարցումներ, որոնք իրականացվել են տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում, այդ թվում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի, Ներքին գործերի, Արտաքին գործերի, Շրջակա միջավայրի նախարարությունների, ծրագրի թիրախ համայնք հանդիսացող Վարդենիսի համայնքապետարանի, հասարակական կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց:

1. Գրավոր հարցումներ

Գրավոր հարցումներ են ուղարկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, Ներքին գործերի, Արտաքին գործերի, Շրջակա միջավայրի նախարարություններ: Կատարվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակում պետական մարմիններին ուղղված պաշտոնական գրավոր հարցումների պատասխանների որակական բովանդակային վերլուծություն:

Այս հարցումները թույլ են տվել գնահատել ԿԽԱ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող կանանց ներառվածությունը, ինտերսեկցիոնալ մոտեցումը, մատչելիության միջոցների կիրառման փաստաթղթավորում, ինչպես նաև հաշվետվողականության և մոնիթորինգի մեխանիզմների առկայությունը:

2. Ֆոկուս խմբային հանդիպումներ

Ֆոկուս խմբային հանդիպումներ կազմակերպվել են Վարդենիսի համայնքապետարանի աշխատակիցների, ինչպես նաև Գեղարքունիքի փրկարար ծառայության, խոշորացված համայնքի կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Հանդիպումների նպատակն էր խմբային քննարկումների միջոցով հավաքել տարբեր կարծիքներ և դիտարկումներ՝ կապված «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 և 2475 բանաձևերի դրույթների իրականացման, համայնքներում տարհանման և իրազեկման մեխանիզմների մատչելիության ու համապատասխանության, ծրագրերի արդյունավետության, մատչելիության և

որակի վերաբերյալ, ինչպես նաև նոր մեթոդների և բարելավումների առաջարկների հավաքագրման համար:

3. Պարզագույն թաքստոցների մատչելիության գնահատում

Ծրագրի թիրախ հանդիսացող Վարդենիս համայնքում կատարվել է պարզագույն թաքստոցների ուսումնասիրություն: Դրանք դիտարկվել են ոչ միայն հաշվի առնելով մատչելիության, այլև գենդերային կոմպոնենտը: Դիտարկման համար հիմք ենք հանդիսացել միջազգային մատչելիության չափորոշիչները՝ մուտքի դռները, թեքահարթակները, աստիճանավանդակները, սանհանգույցները, լուսավորության և կանանց համար առանձնացված տարածքները:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի մատչելիության բաղադրիչի վերլուծություն

Ուսումնասիրվել է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագիրը: Գրավոր հարցումներ են ուղարկվել միայն այն նախարարություններին, որոնց գործողություններում կարևորվել է հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունն ու մատչելիության բաղադրիչը:

Գրավոր հարցումների հիման վրա կարելի է արձանագրել, որ պետական գերատեսչությունները իրականացրել են մի շարք գործողություններ՝ ուղղված ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը, սակայն պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- **հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության վերաբերյալ հստակ վիճակագրական տվյալներ չեն ներկայացվել,այն պարագայում, որ ՄԱԿ ԱԽ 2475 բանաձևը ընդգծում է զինված հակամարտության ազդեցության մասին արդի տվյալների և տեղեկությունների անհրաժեշտությունը և վերլուծությունը:**
- **մատչելիության բաղադրիչի (ժեստերի լեզու, բրայլ, խոշոր տառաչափ, աուդիոնկարագրություն, ֆիզիկական մատչելիություն) վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է կամ նշված չէ**,
- **գործողությունների նկարագրությունը հիմնականում կրում է ընդհանուր բնույթ՝ առանց ներառականության չափելի ցուցանիշների:**

Սա վկայում է, որ ծրագրի իրականացման ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունը կամ չի դիտարկվել որպես առանձին չափելի կատեգորիա, կամ դրա վերաբերյալ տվյալների հավաքագրում չի իրականացվել:

ՀՀ Արտաքին գործերին նախարարությունը, որը ԿԽԱ օրակարգի տեղայնացման հիմնական պատասխանատուներից է: Երկրորդ ազգային ծրագրի շրջանակներում հիմնականում պատասխանատու էր իրականացնել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրազեկվածության բարձրացում, թարգմանությունների իրականացում, կանանց իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերի լայն տարածում, սակայն թարգմանությունները իրականացվել են, բայց նյութերը համակարգված կերպով չեն տեղադրվել որևէ կայքում,իսկ մատչելիության բաղադրիչի վերաբերյալ տեղեկություն գոյություն չունի:

Հաշվի առնելով նախարարության կողմից ստացված երկու գրավոր պատասխանները կարելի է եզրակացնել, որ իրազեկման միջոցառումը չի ներառել համակարգված մատչելիության քաղաքականություն կամ առնվազն այն չի փաստաթղթավորվել:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց և աղջիկների աջակցությանը վերաբերող լայնածավալ գործունեություն՝ Պաշտպանության հարցերով զբաղվող աշխատանքային խմբի (Protection Working group), Գենդերային հիմքով բռնության կանխարգելման ենթաաշխատանքային խմբի, որպես «Ապահով տարածքներ» (Safe space) վերապրոֆիլավորված ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների, SafeYOU հավելվածի և առաջնային կարիքների գնահատման հարթակի միջոցով:

- Իրականացվել է լայնածավալ կարիքների գնահատում,
- 30.000-ից ավելի կանանց տրամադրվել են տեղեկատվական նյութեր,
- 1062 կին ստացել է սոցիալ-հոգեբանական աջակցություն,
- Գործարկվել է առաջնային կարիքների գնահատման հարթակ:

Չնայած արձանագրված լայնածավալ աշխատանքներին և գրանցած հաջողություններին չկան տվյալներ, թե քանի հաշմանդամություն ունեցող կին է ընդգրկվել ծրագրերում,

- առցանց հարթակները ևս մատչելի չեն եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար
- տեղեկատվական նյութերի մատչելի ձևաչափերի մասին (բրայլ, խոշոր տառաչափ, հեշտ ընթերցվող տարբերակ) տեղեկություններ չեն տրամադրվել

- Ապահով տարածքներից միայն մի քանիսն են մասնակի մատչելի եղել հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Այսպիսով, իրականացված գործողությունները կարող են գնահատվել որպես գենդերազգայուն, սակայն ոչ մատչելի, հաշվի առնելով նաև այն, որ հաշմանդամություն ներառող բաղադրիչը չի փաստաթղթավորվել:

Շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված միջոցառումներից էին կլիմայական քաղաքականություններում կանանց ներգրավմամբ աշխատաժողովների, քննարկումների և հետազոտությունների իրականացումը: Վերջիններս անցկացվել են կանանց թիրախավորված ներգրավմամբ և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարկական կազմակերպությունների ակտիվ մասնակցություն (90% կին կազմ), սակայն կրկին բացակայում են հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության վերաբերյալ տոկոսային տվյալները կամ առանձին վիճակագրությունը, անդրադարձ չի կատարվում մատչելիության ապահովման մեխանիզմներին: (տարածքի հարմարեցում, ժեստերի լեզու և այլն)

Քննարկումները ներկայացվում են որպես «ներառական», սակայն ներառականությունը սահմանափակվում է գենդերային բաղադրիչով՝ առանց հաշմանդամության դիտանկյան:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձեւի դրույթների իրականացման 2022-2024 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված «Տեղահանման և տեղավորման պատասխանատու մարմինների աշխատակիցների կարողությունների հզորացում գենդերազգայունության բարձրացում իրավապահ մարմինների, դատավորների վերապատրաստում բռնությունից, այդ թվում սեռական բռնությունից տուժած կանանց ուղղորդման մեխանիզմների բարելավում, միջազգային լավագույն փորձի տեղայնացում» միջոցառումն իրականացվել է ներքին գործերի նախարարության Ոստիկանության կողմից: Ուսումնասիրվել են ընտանեկան բռնության, սեռական ազատության դեմ հանցագործությունների, թրաֆիքինգի վերաբերյալ թեմաներ, սակայն պատասխան նամակում

- չի նշվում, որ դասընթացներում անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող կանանց առանձնահատուկ խոցելիությանը,
- չի ներկայացվել, թե արդյոք ուսումնասիրվել են հաղորդակցման մատչելի ձևերը,
- բացակայում է վերապատրաստումների բովանդակության ներառականության գնահատումը:

Հաշվի առնելով, որ հաշմանդամություն ունեցող կանայք բազմակի խոցելիության խմբում են, նրանց վերաբերյալ բաղադրիչի բացակայությունը վկայում է վերապատրաստումների ոչ պարտադիր ինտերսեկցիոնալ լինելու մասին:

Փրկարար ծառայության միջոցառումների վերաբերյալ տրամադրված պատասխաններում ի տարբերություն մյուս գերատեսչությունների որոշակի թվային տվյալներ են պահպանվել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ, մասնավորապես՝ ուսումնական հաստատություններում իրականացված դասընթացների և վարժանքների ընթացքում դիտարկվել են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կարիքները, սակայն հստակ քանակ և սեռ չի նշվում, մոտ 10 հոգու համար ապահովվել են թեքահարթակներ: Տարհանման վարժանք է կազմակերպվել «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ում՝ 125 հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

2025թվականին ծառայությունը իրականացրել է Երևանի և ՀՀ բոլոր մարզերի բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերի ուսումնասիրություն, որով պարզվել է, որ մեծամասնությունը պատրաստ է բնակչության պատսպարմանը:

Ճգնաժամային և արտակարգ իրավիճակներում հաշմանդամություն ունեցող կանայք բարձր ռիսկի խմբում են, սակայն ինչպես վերը նշված նախարարություններում, այնպես էլ փրկարար ծառայությունում բացակայում են հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության վերաբերյալ կոնկրետ թվային տվյալները և պարզագույն թաքստոցների մատչելիության չափորոշիչները:

Գործողությունների ազգային երկրորդ ծրագրի իրականացման շրջանակում պետական մարմինների կողմից ներկայացված տեղեկատվությունը վկայում է, որ

- հաշմանդամություն ունեցող կանանց ներառումը չի փաստաթղթավորվել որպես առանձին ցուցիչ,
- մատչելիության ապահովումը չի դիտարկվել որպես համակարգված քաղաքական պահանջ,
- բացակայում է տվյալների հավաքագրման և հաշվետվողականության միասնական մեխանիզմ:

Արդյունքում, հնարավոր չէ գնահատել, թե իրականացման գործընթացում որքանով է ապահովվել հաշմանդամություն ունեցող կանանց արդյունավետ և հավասար մասնակցությունը:

Ֆոկուս խմբային քննարկումների վերլուծություն

(Վարդենիսի համայնքապետարանի, ՏԻՄ և փրկարար ծառայության ներկայացուցիչներ)

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքը 2023թվականի Արցախի բռնի տեղահանման ընթացքում միգրացիոն գոտի է հանդիսացել՝ ընդունելով 2000 արցախցիների, որոնցից 600-ը բնակություն է հաստատել համայնքում:

Աշխատանքներն իրականացվել են համայնքապետարանի և Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության համագործակցությամբ:

Ֆոկուս-խմբային հանդիպման մասնակիցների մատնանշմամբ ստեղծված ժամանակավոր վրանային ավանում առանձնացվել են հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց համար տարածքներ, տրամադրվել է առաջին բուժօգնություն, սակայն հստակ չափորոշիչներ չեն նշվել:

Համայնքապետարանում առկա է քաղաքացիների ցուցակ, իրականացվում է կարիքների գնահատում, որը դեռևս ամբողջական չէ:

Համայնքապետարանում և Միասնական սոցիալական ծառայությունում չեն պահպանվել հաշմանդամություն ունեցող անձանց քանակի վերաբերյալ հստակ տվյալներ: Մոտ 274 անձ՝ առանց սեռատարբերակված և կարիքահեն տվյալների:

Վերլուծական շրջանակ

Վերլուծությունն իրականացվել է թեմատիկ բովանդակային մեթոդով և խմբավորվել է երեք հիմնական չափանիշներով.

1. **Տարհանման և անվտանգության աշխատանքների իրականացում**
2. **Կանայք, խաղաղություն և անվտանգություն (ԿԽԱ) օրակարգի իրազեկվածություն**
3. **Աշխատակազմի կարողությունների գնահատում**

Յուրաքանչյուր բաժնում դիտարկվում են նաև

- ներառականության աստիճանը,
- հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավվածությունը,
- հաշվետվողականության և մոնիթորինգի մեխանիզմների առկայությունը:

Չափանիշ 1

Համայնքում տարհանման աշխատանքներն իրականացվում են նախապես հաստատված պլանի համաձայն: Ըստ պատասխանատուների գնահատման առանձնացված է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հատվածը, որտեղ բացակայում է հաշմանդամության տարբեր խմբերի բաշխումն ու կարիքների գնահատումը, ըստ այդմ տարհանման, աջակցության մեխանիզների և հստակ դերաբաշխումներով պատասխանատուների առկանությունը:

Վերը նշված խնդիրներից զատ համայնքում առկա է նաև ենթակառուցվածքների և մատչելի տրանսպորտի խնդիր, ինչը դժվարացնում է տարհանման և հաշմանդամություն ունեցող անձանց պարզագույն թաքստոցներ կամ ապաստարաններ տեղափոխման գործընթացը:

«Աստղավարդ» ՀԿ-ի հետ համագործակցությամբ ձեռք է բերվել երկու ավտոմեքենա, որոնք որոշ չափով հեշտացրել են հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխման աշխատանքները:

Տարհանման և անվտանգության համակարգը ունի կազմակերպչական հիմք, սակայն չունի ներառական չափորոշիչներով պլանավորված ենթակառուցվածքային ռազմավարություն:

Հաշվետվողականության և մոնիթորինգի մեխանիզմները չեն ներառում մատչելիության պարբերական աուդիտ, խոցելի խմբերի մասնակցության ցուցիչներ և չեն ապահովում որակի վերահսկում (օր.՝ դեղորայքի թարմություն):

Սահմանային լարվածության կամ արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվությունը տրվում է շչակների կամ համայնքապետարանի սոցիալական ցանցերի միջոցով: Լսողության, տեսողության կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար առանձնացված տեղեկատվության միջոցներ առկա չեն: Տեղեկությունը փոխանցվում է ընտանիքի անդամների միջոցով:

Տեղեկատվական համակարգը ապահովում է արագ հաղորդակցում, սակայն չի ապահովում անկախ և անմիջական հասանելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Մոնիթորինգի մեխանիզմներ մատչելիության գնահատման համար չկան:

Համայնքապետարանի աշխատակիցների գնահատմամբ համայնքում առկա պարզագույն թաքստոցները բավարար են գնահատվում բնակչության ընդունման կամ ժամանակավոր պաշտպանության համար, սակայն մոնիթորինգի աշխատանքները ցույց տվեցին, որ որոշ թաքստոցներ մուտք գործել հնարավոր չէ:

Պարզագույն թաքստոցները գտնվում են հիմնականում բնակելի շենքերի նկուղային հարկերում, կառուցված՝ խորհրդային տարիներին: Պատասխանատուների գնահատմամբ թաքստոցների մեծ մասը մատչելի չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, քանի որ չկան թեքահարթակներ և համապատասխան լայնության մուտքի դռներ:

Պարզագույն թաքստոցներում առկա գույքը, կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց համար առանձնացված տարածքների և աջակցող սարքերի առկայությունն ևս անբավարար գնահատվեց:

Դեղորայքը, հիգիենայի պարագաները տրամադրվել են հասարակական կազմակերպությունների կողմից, որոնց քանակը սահմանափակ է:

Զափանիշ 2

2000թ--ի հոկտեմբերի 31-ին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության խորհուրդը 4213–րդ նիստում ընդունել է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին վերաբերող առաջին բանաձևը՝միաձայն:1325 բանաձևը անդրադառնում է կանանց վրա կոնֆլիկտների ազդեցությանը՝ ընդգրկելով զինված հակամարտությունների կանխարգելման, բռնությունից պաշտպանված լինելու, խաղաղության գործընթացներին (բանակցային, խաղաղաշինական, խաղաղարարական և խաղաղապահական գործընթացներ, մարդասիրական այլ առաքելություններ) կանանց ներգրավմանը: Բանաձևը նաև կոչ է անում ՄԱԿ-ի անդամ բոլոր պետություններին և դերակատարներին նախաձեռնել բոլոր անհրաժեշտ քայլերը կանանց անվտանգությունն ու որոշումների կայացման և բանակցային գործընթացներում հավասար մասնակցությունն ապահովելու համար: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության՝ Անվտանգության խորհուրդը (ԱԽ) լիազորություն ունի պարտադիր տարածելու իր բոլոր որոշումներն անդամ պետությունների վրա: Այս լիազորությամբ պայմանավորված՝ 1325 բանաձևը տարածեց գենդերային առաջնահերթությունը՝ պետությունների համար ստեղծելով նոր գործընկերային հնարավորություններ ՄԱԿ-ի և քաղհասարակական կառույցների հետ:

ՄԱԿ ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» 1325 բանաձևի իրավական պարտադիր սկզբունքը, պարտավորեցնում է անդամ պետություններին բանաձևի տեղայնացման համար իրավական հիմքեր ի դեմս գործողությունների ազգային ծրագրերի:

Հայաստանի ազգային ծրագիրը բանաձևի դրույթները տեղայնացնելու շնորհիվ ուշադրության կենտրոնում է պահում սահմանամերձ համայնքներում կանանց տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրները, տեղահանված կանանց և աղջիկների հատուկ պաշտպանվածության ապահովման հարցերը:

Սահմանամերձ Վարդենիս խոշորացված համայնքի ավագանին կազմված է 28 անդամներից, որոնցից 10-ը իգական սեռի ներկայացուցիչներ են: Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցների դիտարկմամբ՝ ավագանու հինգ անդամ կանայք ներգրավված են կանանց խնդիրների բարձրաձայնման մեջ:

Համայնքապետին կից կանանց խորհուրդ, հանձնաժողով կամ աշխատանքային խումբ գոյություն չունի:

Ըստ համայնքապետարանի ներկայացուցիչների հոգեբանական, սեռական կամ ֆիզիկական բռնության դեպքեր համայնքում չեն արձանագրվել, սակայն մասնակիցները չեն բացառել ռիսկերի հնարավորությունը:

Սա վկայում է, որ ռիսկերի կանխարգելման համակարգը հիմնված է դեպքերի արձանագրման վրա և գոյություն չունի կանխարգելիչ գենդերազգայուն գնահատման մեխանիզմ:

Համայնքապետարանը կարևորում է համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ և նշվեց կանանց ներգրավմամբ համայնքային անվտանգության, ճգնաժամային արձագանքման և խաղաղաշինության վերաբերյալ դասընթացների անցկացումը:

Քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ համայնքում կանանց հզորացման ուղղված ծրագրեր իրականացվում են հիմնականում բիզնես նախաձեռնությունների և զարգացման փոքր դրամաշնորհային նախագծերի շրջանակներում, սակայն հաշմանդամություն ունեցող կանանք հիմնականում չեն մասնակցում, քանի որ վերջիններս հաճախ ունեն հաղորդակցման կամ սոցիալական մեկուսացման խնդիրներ, իսկ աշխատանքի մեծ մասը իրականացնում են սոցիալական աշխատողները՝ այցելելով նրանց:

Հաշվի առնելով վերը նշվածը կարելի է եզրակացնել, որ ԿԽԱ օրակարգը համայնքում իրականացվում է մասամբ, այսինքն չկան ինստիտուցիոնալացված մասնակցային մեխանիզմ, ներառականության չափելի ցուցիչներ և մոնիթորինգային գործիքակազմ:

Եթե «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին վերաբերող առաջին բանաձևի՝ 1325 բանաձևի վերաբերյալ համայնքում պատկերացում ունեին, ապա 2475 բանաձևը պահանջում է լրացուցիչ իրազեկում:

Այս կարևորագույն բանաձևը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երբևէ ընդունված առաջին փաստաթուղթն է, որը վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց:

Բանաձևի գործնական կիրառումը հիմնականում դիտարկվել է ԼՂ-ից տեղահանված անձանց ընդունման համատեքստում:

Համայնքը փաստացի ընդունել է ավելի քան 2000 տեղահանված անձ, որոնցից մոտ 600-ը մնացել են համայնքում, սակայն քննարկման ընթացքում չեն ներկայացվել հաշմանդամություն ունեցող կանանց առանձին տվյալներ և տեղահանման ընթացքում կիրառված մատչելիության չափորոշիչներ:
ՄԱԿ ԱԽ 2475 բանաձևի դրույթների իրականացումը տեղի է ունեցել գործնական մակարդակում, սակայն առանց ինստիտուցիոնալ փաստաթղթավորման, մոնիթորինգային ցուցիչների և ներառականության գնահատման մեխանիզմների:

Չափանիշ 3

Ֆոկուս-խմբային քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի կարողությունները հիմնված են հիմնականում անհատական փորձի, ոչ թե ստանդարտացված, ինստիտուցիոնալ ուսուցման համակարգի վրա:

Պարզագույն թաքստոցների պատասխանատուները հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելու և աշխատելու վերաբերյալ հատուկ վերապատրաստում չեն անցել, միայն որոշակի փորձ ունեն սոցիալական բաժնի աշխատակիցները:

Ֆոկուս-խմբային քննարկում՝ Վարդենիս համայնքի կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների և երիտասարդների հետ

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը անդրադառնում է կանանց վրա կոնֆլիկտների ազդեցությանը՝ ընդգրկելով զինված հակամարտությունների կանխարգելման, բռնությունից պաշտպանված լինելու, խաղաղության գործընթացներին (բանակցային, խաղաղաշինական, խաղաղարարական և խաղաղապահական գործընթացներ, մարդասիրական այլ առաքելություններ) կանանց ներգրավմանը:

Սահմանային սրացումների, արտակարգ իրավիճակների և տարհանման գործընթացների ազդեցությունը հաշմանդամություն ունեցող կանանց և երիտասարդների վրա գնահատելու համար իրականացվել է ֆոկուս-խմբային քննարկում սահմանամերձ Վարդենիս համայնքի կրթական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ:

Քննարկման մասնակիցների դիտարկմամբ վերջին սահմանային սրացումները զգալի հոգեբանական, սոցիալական ազդեցություն են թողել Վարդենիսում բնակվող երիտասարդների վրա: Մասնակիցները նշեցին, որ 44-օրյա պատերազմի օրերին ոչ

ոք իրականում պատրաստված և կրթված չէր, ինչի հետևանքով առաջին արձագանքը եղել է վախը, անհանգստությունը և հոգեբանական լարվածությունը:

44-օրյա պատերազմի և Արցախից բռի տեղահանությունից հետո բազմաթիվ մարդիկ տեղափոխվել են Վարդենիս, ինչի պատճառով համայնքը գտնվել է լրացուցիչ ճնշման տակ: Մի շարք ընտանիքներ ստիպված են եղել լքել իրենց տները՝ սահմանին անմիջապես մոտ գտնվելու կամ կրակոցների պատճառով:

Մասնակիցների կարծիքով՝ արտակարգ իրավիճակներում երիտասարդ կանայք և հատկապես հաշմանդամություն ունեցող անձիք բախվում են հավելյալ ռիսկերի ու դժվարությունների՝ կապված ինչպես անվտանգ միջավայրի, այնպես էլ սննդի, առաջին անհրաժեշտության պարագաների և ապաստարանների մատչելիության հետ: Նշվեց, որ լարվածության օրերին հաճախ փակվում են խանութները, սահմանափակվում է սննդի և կենցաղային ապրանքների հասանելիությունը, ինչն առավել խոցելի է դարձնում կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց, ում երբեմն դժվար է հարմարվել նոր պայմաններին կամ տեղափոխվել ավելի անվտանգ տարածք:

Մասնակիցների պնդմամբ Վարդենիս քաղաքի կենտրոնական հատվածում բնակչությանը տեղեկատվություն է փոխանցվել շչակների միջոցով, գյուղական վարչական շրջաններում շչակները չեն գործել, ինչի հետևանքով մարդիկ տեղեկացել են ուշացումով կամ ոչ պաշտոնական աղբյուրներից: Անգամ այն ժամանակ, երբ տեսանելի էր հրետակոծությունը և դաշտերում հրդեհներ էին առաջանում, ազդանշան կամ պաշտոնական նախազգուշացում չկար: Տեղեկատվությունը հիմնականում տարածվում էր ոչ պաշտոնական ուղիներով, հարևանների կամ ծառայող բարեկամների միջոցով, և սոցիալական ցանցերում շրջանառվող հրապարակումներով:

Պաշտոնական հաղորդագրությունները հեռուստատեսությամբ կամ պաշտոնական էջերով բնակչությանը հասել են հիմնականում ուշացումով՝ մոտ մեկ ժամ անց, ինչն արդեն նվազեցնում է օպերատիվ արձագանքման արդյունավետությունը:

Ի տարբերություն համայնքապետարանի արտակարգ իրավիճակների արձագանքման պլանների, որտեղ հստակ պատասխանատուներ չկան, ովքեր զբաղվելու են հաշմանդամություն ունեցող անձանց ուղեկցմամբ, ուսումնական հաստատություններում դա հստակ է: Փրկարար ծառայության հետ վարժանքներ իրականացվում են, սակայն արտակարգ իրավիճակների ժամանակ կողմնորոշվելիս լրացուցիչ պարզաբանումների կարիք է առաջանում ըստ դպրոցների տնօրենների:

44-օրյա պատերազմի ընթացքում տնօրենները սպասել են փրկարար ծառայություններից կամ ալ կառույցներից հրահանգների՝ աշակերտներին տարհանելու համար, որոշում կայացվել է միայն այն ժամանակ, երբ կրակն արդեն տեսանելի և մոտ է եղել դպրոցին:

Հաշմանդամություն ունեցող մասնակիցների պնդմամբ 2020թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում Վարդենիսում տարհանման գործընթացը ընթացել է լուրջ դժվարություններով: Մեքենաներ չեն եղել կամ ճանապարհները խցանված են եղել, ինչը ստեղծել է հավելյալ վտանգային իրավիճակներ, հատկապես հաշմանդամություն ունեցող և ինքնուրույն տեղաշարժվել չկարողացող անձանց համար:

Այն հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր կարողանում են տեղափոխվել բախվում են պարզագույն թաքստոցների ֆիզիկական անմատչելիության կամ առկայության խնդրին: Բնակչության թվաքանակը հաճախ չի համապատասխանում թաքստոցներին, քանի որ մի քանի շենքի բնակիչներին բաժին է ընկնում մոտակա հաստատության նկուղային հարկը, որոնք շատ հաճախ փակ են ու կողպված, պահվում են անձնական իրեր: Բնակիչները հաճախ տեղեկացված չեն, թե ում մոտ է բանալին կամ ինչպես կարելի է հասանելի դարձնել տարածքը արագ արձագանքման պահին:

Բարձրաձայնած խնդիրն արձանագրվել է նաև Վարդենիս համայնքում պարզագույն թաքստոցների մոնիթորինգ իրականացնող խմբի մոտ՝ մինչդեռ ՆԳՆ Փրկարար ծառայությունից ստացված գրությամբ 2025թվականին բոլոր պարզագույն թաքստոցներն ուսումնասիրվել են և բացահայտվել է, որ դրանք մեծամասամբ կարող են ժամանակավոր պաշտպանության վայրեր լինել բնակչության համար:

Մասնակիցների գնահատմամբ պարզագույն թաքստոցներում ոչ թե ապահովության զգացողություն են ունեցել, այլ հոգեբանական ճնշում, քանի որ անհարմար և ոչ ներառական տարածք է եղել ինչը առաջացրել է շարժման խոչընդոտներ, զգացել են վերահսկողության բացակայություն և սեռական կամ գենդերային վտանգի զգացում:

Հաշմանդամություն ունեցող կանանց խոցելիության վերաբերյալ ընկալումները սահմանափակ են: Արձանագրվել է, որ կոնֆլիկտային իրավիճակներում նրանց կարիքները հաճախ մնում են «անտեսանելի» և գոյություն չունի հատուկ պլանավորում նրանց համար:

Արատակարգ իրավիճակների կազմակերպման աշխատանքներում ըստ մասնակիցների հաշմանդամություն ունեցող կանանց ներգրավվածությունը անհրաժեշտություն է, քանի որ նրանք հանդիսանում են ռիսկերի ու խնդիրների անմիջական կրողներ, նրանց մասնակցությունը կարող է զգալիորեն բարձրացնել որոշումների որակը, նպաստել ավելի ներառական լուծումների մշակմանը և ապահովել, որ պլանավորումն իրականացվի իրական կարիքների հիման վրա:

Ստեղծված պայմանները լիարժեք չեն ապահովել նման ներգրավում, ինչի հետևանքով որոշումները հաճախ չեն անդրադարձել հաշմանդամություն ունեցող կանանց և երիտասարդների կարիքներին:

Քննարկման մասնակիցները նշեցին, որ համայնքային և պետական մակարդակում որոշ դեպքերում նկատվում է հաշմանդամություն ունեցող երիտասարդ կանանց ու աղջիկների կարիքների հաշվառում, սակայն այն ունի մասնակի և ոչ համակարգված բնույթ:

Մասնակիցները նշում են, որ երիտասարդ կանանց հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունը համայնքային նախաձեռնություններում առկա է, սակայն որոշ դեպքերում այն ձևական բնույթ է կրում և որոշումների կայացման մակարդակում ազդեցությունը սահմանափակ է:

Մասնակցությունը կրում է ծրագրային և իրավիճակային բնույթ, այլ ոչ ինստիտուցիոնալ: Չկա մշտական մեխանիզմ, որը կապահովի ներառական մասնակցություն և գենդերազգայուն որոշումների կայացում:

Ընդհանուր դիտարկմամբ՝ գործընթացները դեռևս լիարժեք չեն համապատասխանում ՄԱԿ-ի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» (ԿԱԽ) 2475 բանաձևի սկզբունքների հետ, քանի որ չկան ներգրավման կայուն մեխանիզմներ, իսկ որոշումները հաճախ կայացվում են առանց ուղղակի շահառուների մասնակցության:

Քննարկումը ցույց է տալիս, որ երիտասարդների շրջանում ՄԱԿ ԱԽ 1325 և 2475 բանաձևերի վերաբերյալ գիտելիքը հիմնականում մակերեսային է, ձեռք է բերվել միայն հասարակական կազմակերպությունների կարճաժամկետ ծրագրերի միջոցով:

ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը հաճախ ընկալվում է որպես «կանանց իրավունքների փաստաթուղթ», իսկ 2475-ը՝ գրեթե անհայտ կամ սահմանափակորեն հայտնի:

Կա ընկալումների մասնակի համապատասխանություն Կանայք, խաղաղություն և անվտանգություն (ԿԽԱ) օրակարգի արժեքներին, սակայն բացակայում է բանաձևերի ռազմավարական բովանդակության ըմբռնումը, ազգային և տեղական մակարդակներում դրանց կիրառման գիտակցումն ու երիտասարդների դերակատարման հստակ պատկերացումը:
Ֆոկուս խմբի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. Երիտասարդների շրջանում առկա է արժեքային աջակցություն ԿԽԱ օրակարգին, սակայն սահմանափակ է նորմատիվ գիտելիքը:
2. Մասնակցությունը կրում է ծրագրային և ոչ կայուն բնույթ:
3. Հաշմանդամություն ունեցող երիտասարդների ներգրավվածությունը մնում է համակարգային բաց:
4. Կրթական համակարգում բացակայում է ԿԽԱ օրակարգի համակարգված ինտեգրում:
5. Ինստիտուցիոնալ մեխանիզմները թույլ են և չունեն մշտադիտարկման գործիքներ:

Վարդենիս համայնքի պարզագույն թաքստոցների մոնիթորինգի վերլուծություն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Չափանիշ	Պարզագույն թաքստոց 1	Պարզագույն թաքստոց 2	Պարզագույն թաքստոց 3	Պարզագույն թաքստոց 4	Պարզագույն թաքստոց 5
Անվանում/ Վայր	Վարդենիս համայնքի համայնքապետարանի նկուղ	Վարդենիս համայնքի բազմաբնակարան շենքի նկուղ	Վարդենիս համայնքի բազմաբնակարան շենքի նկուղ	Վարդենիս համայնքի բազմաբնակարան շենքի նկուղ	Վարդենիս համայնքի բազմաբնակարան շենքի նկուղ
Համայնք	Վարդենիս				
Մոնիթորինգ իրականացնողներ	Նարեկ Արևշատյան Մանվել Գևորգյան				
Պատասխանատու անձ/ Կոնտակտ	Եղիշե Զարոյան 098067087				

II. ՄՈՒՏՔ ԵՎ ՄՈՒՏՔԻ ՈՒՂԻՆԵՐ

Չափանիշ	Պարզագույն թաքստոց 1	Պարզագույն թաքստոց 2	Պարզագույն թաքստոց 3	Պարզագույն թաքստոց 4	Պարզագույն թաքստոց 5
Մատչելի մուտք	Առկա են 1,5մ. լայնությամբ աստիճաններ բացակայում են թեքահարթակները : Մուտքը ազատ է:	Առկա են միայն աստիճաններ, բացակայում են թեքահարթակները: Պարզագույն թաքստոցների մուտքը մատչելի չէ, ամբողջությամբ պատված է կենցաղային աղբով:	Առկա են միայն աստիճաններ, բացակայում են թեքահարթակները: Մուտքը ազատ է:	Առկա են միայն աստիճաններ, բացակայում են թեքահարթակները: Պարզագույն թաքստոցների մուտքը մատչելի չէ՝ առկա խոտածածկույթի և կիսաքանդված ասֆալտբետոնյա ծածկույթի պատճառով:	Առկա են միայն աստիճաններ, բացակայում են թեքահարթակները: Պարզագույն թաքստոցների մուտքը մատչելի չէ՝ առկա խոտածածկույթի և կիսաքանդված ասֆալտբետոնյա ծածկույթի պատճառով:
Թեքահարթակ (ամուր / չսայթաքող)	Առկա չէ				
Թեքություն (≤1:12)	_____				
Դռների լայնություն (≥90 սմ)	Լայնությունը՝ բավարար: Դռների մոտ առկա են բարձր շեմեր:	Լայնությունը՝ անբավարար			
Այլընտրանքային մուտք	Առկա է: Կրկին բարձր շեմով ու առանց թեքահարթակի:	Առկա չէ:	Առկա է: Կրկին բարձր շեմով ու առանց թեքահարթակի:	Առկա չէ:	Առկա չէ:

Բաժնի վերլուծություն	Մատչելիության տեսանկյունից իրականացված մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկված բոլոր պարզագույն թաքստոցները **չեն համապատասխանում մատչելիության նվազագույն պահանջներին** և գտնվում են **անբավարար վիճակում**: Վերլուծության ընթացքում արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները. **1.Ֆիզիկական մատչելիության բացակայություն** Դիտարկված բոլոր օբյեկտներում բացակայում են թեքահարթակները (կամ համապատասխան գործառույթ կատարող այլ սարքավորումներ), առկա են միայն աստիճաններ: Թեքահարթակների կամ այլ մատչելի լուծումների բացակայության հետևանքով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք, տարեցները և մանկասայլակով ծնողները չեն կարող ինքնուրույն և անվտանգ մուտք գործել պարզագույն թաքստոցներ: **2.Սանիտարական և տեխնիկական անմխիթար վիճակ** Բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերում տեղակայված պարզագույն թաքստոցների մուտքերը գտնվում են անբարենպաստ վիճակում. առկա են կենցաղային աղբ և թափոններ, կիսաքանդված ասֆալտբետոնյա մակերեսներ և խոտածածկույթ, ինչը ոչ միայն խոչընդոտում է անվտանգ մուտքը, այլև բացասաբար է ազդում թաքստոցների գործնական օգտագործման վրա: **3.Այլընտրանքային մուտքերի սահմանափակ մատչելիություն** Թեև դիտարկված որոշ պարզագույն թաքստոցներում (թիվ 1 և թիվ 3) առկա են այլընտրանքային մուտքեր, դրանք ևս չեն ապահովում մատչելիություն՝ թեքահարթակների բացակայության և մուտքի բարձր շեմերի պատճառով: Նշված հանգամանքները փաստացի զրոյացնում են այդ մուտքերի գործնական կիրառելիությունը մատչելիության տեսանկյունից: **Ընդհանուր գնահատական** Վերոնշյալ խնդիրների համակցված ազդեցության արդյունքում պարզագույն թաքստոցների մատչելիությունը գնահատվում է որպես **անբավարար** և պահանջում է անհապաղ միջամտություն և բարելավման միջոցառումների իրականացում:

III. ԿԱՀՈՒՅՔ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չափանիշ	Պարզագույն թաքստոց 1	Պարզագույն թաքստոց 2	Պարզագույն թաքստոց 3	Պարզագույն թաքստոց 4	Պարզագույն թաքստոց 5
Շրջադարձի տարածք (≥150 սմ)	Համապատասխանում է:	Չի համապատասխանում:	Համապատասխանում է:	Համապատասխանում է:	Համապատասխանում է:
Մահճակալի բարձրություն (45-50 սմ)	Համապատասխանում է:	Առկա չէ:	Համապատասխանում է:	Առկա չէ:	Համապատասխանում է: Սակայն մասամբ է տեղադրված:
Հասանելի պահարաններ (≤1.20 մ)	Համապատասխանում է:	Պահարաններ առկա չեն:	Համապատասխանում է:	Պահարաններ առկա չեն:	Պահարաններ առկա չեն:
Աստիճանների բռնածողեր (90 սմ)	Բացակայում է:				

Բաժնի վերլուծություն	Կահույքի և ներքին հարմարությունների գնահատումը ցույց է տալիս, որ դիտարկված թաքստոցները միայն մասնակիորեն են կահավորված և չեն ապահովում անվտանգության ու հարմարավետության նվազագույն պայմանները հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: Համաձայն համայնքային իշխանությունների միայն մի քանի թաքստոցներն են որ մասամբ ապահովված են գույքով, որը ձեռք են բերել միջազգային դոնոր կազմակերպությունների օգնությամբ: Դիտարկման ընթացքում արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները. **1. Աստիճանների բռնաձողերի բացակայություն** Դիտարկված բոլոր 5 թաքստոցներում բացակայում են աստիճանների բռնաձողերը: Սա անվտանգային բացթողում է, քանի որ նկուղային հարկեր իջնելիս տարեցների, տեսողության և հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար ընկնելու և վնասվածքներ ստանալու ռիսկը դառնում է չափազանց բարձր: **2. Շրջադարձի և ազատ տեղաշարժի սահմանափակումներ** Թեև որոշ պարզագույն թաքստոցում առկա է անհրաժեշտ շրջադարձի տարածք, մի մասում այն չի համապատասխանում նվազագույն չափորոշիչներին, ինչը խոչընդոտում է անվտանգ տեղաշարժին: **3. Գույքի բացակայություն և անհասանելիություն** Թեև որոշ թաքստոցներում (թիվ 1 և թիվ 3) առկա է որոշակի գույք, դրանք հիմնականում գտնվում են փակ տուփերում կամ մասամբ տեղադրված վիճակում: Բացի այդ, թիվ 2, 4 և 5 թաքստոցներում ընդհանրապես բացակայում է գույքը: **Ընդհանուր գնահատական** Կահույքը և ներքին հարմարությունների վիճակը գնահատվում է **անբավարար**: Պարզագույն թաքստոցները բերված չեն պատշաճ վիճակի, իսկ անվտանգության տարրերի (բռնաձողերի) բացակայությունը վտանգում է խոցելի խմբերի տեղաշարժը:

IV. ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ

Չափանիշ	Պարզագույն թաքստոց 1	Պարզագույն թաքստոց 2	Պարզագույն թաքստոց 3	Պարզագույն թաքստոց 4	Պարզագույն թաքստոց 5
Դռան լայնություն (≥90 սմ)	Սանհանգույցները բացակայում են				
Լայնություն (հանրային՝120 սմ)	_____				
Գաղտնիություն և լուսավորություն	_____				
Բաժնի վերլուծություն	Սանհանգույցների առկայության և մատչելիության գնահատումը ցույց է տվել, որ դիտարկված բոլոր պարզագույն թաքստոցներում սանհանգույցները բացակայում են: **Ընդհանուր գնահատական** Սանհանգույցների վիճակը գնահատվում է **անբավարար**:Բացակայում են սանհանգույցները հետևաբար բացակայում է նաև մատչելիության կոմպոնենտը ուստի թաքստոցները չեն կարող ծառայել որպես մարդկանց երկարատև պաշտպանության վայրեր: Բոլոր թաքստոցներում առկա է կոյուղատար ցանց ինչը հնարավորության է տալիս համապատասխան աշխատանքների կատարման արդյունքում բավարար վիճակի բերելու:				

V. ԱՐՏԱԿԱՐԳ ԵԼՔԵՐ

Չափանիշ	Պարզագույն թաքստոց 1	Պարզագույն թաքստոց 2	Պարզագույն թաքստոց 3	Պարզագույն թաքստոց 4	Պարզագույն թաքստոց 5
Հստակ նշված և հեշտ բացվող	Արտակարգ ելքեր որպես այդպիսին առկա չեն:Ունի 2 մուտք որոնք երկուսն էլ մատչելի չեն անվասայլակով տեղաշարժվելու համար	Առկա չեն	Արտակարգ ելքեր որպես այդպիսին առկա չեն: Ունի 2 մուտք որոնք երկուսն էլ մատչելի չեն անվասայլակով տեղաշարժվելու համար	Առկա չեն	Առկա չեն
Նշանների առկայություն/Տեսանելիություն մթության մեջ	Նշաններ առկա չեն	Նշաններ առկա չեն	Առկա են ուղղորդող սլաքներ, որնքն տեսանելի չեն մթության մեջ	Նշաններ առկա չեն	Նշաններ առկա չեն
Անվասայլակով մատչելիություն	Անբավարար				

Բաժնի վերլուծություն	Արտակարգ ելքերի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ թաքստոցների մեծ մասում արտակարգ ելքեր որպես այդպիսին առկա չեն կամ չեն ապահովում համապատասխան մատչելիություն : Վերլուծության ընթացքում արձանագրվել են հետևյալ խնդիրները. 1. **Արտակարգ ելքերի բացակայություն կամ անհամապատասխանություն** Որոշ պարզագույն թաքստոցներում դրանք չեն դիտարկվում որպես լիարժեք արտակարգ ելքեր և մատչելի չեն անվասայլակով օգտվողների համար:Հիմնական դեպքերում բացակայում են այլընտրանքային և արտակարգ ելքերը, ինչը նշանակում է, որ հիմնական մուտքի փակվելու կամ փլուզվելու դեպքում տարհանումն անհնար կլինի: 2. **Տեսանելի և լուսավորվող նշանների բացակայություն** Գրեթե բոլոր պարզագույն թաքստոցներում բացակայում են արտակարգ ելքերը նշող տեսանելի և մթության մեջ ճանաչելի նշաններ: 3. **Անվտանգության ցածր մակարդակ** Արտակարգ իրավիճակներում արագ և անվտանգ տարհանման հնարավորությունը խիստ սահմանափակ է բոլոր թաքստոցներում: **Ընդհանուր գնահատական** Արտակարգ ելքերի ապահովումը գնահատվում է որպես **անբավարար** և պահանջում է համակարգված բարելավում՝ անվտանգության նվազագույն պահանջներին համապատասխան:

VI. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Չափանիշ	Պարզագույն թաքստոց 1	Պարզագույն թաքստոց 2	Պարզագույն թաքստոց 3	Պարզագույն թաքստոց 4	Պարզագույն թաքստոց 5
Մեծ տառատեսակ/բարձր հակադրություն	_____				
Պատկերներ կամ Բրայլյան նշումներ	_____				
Ձայնային/Տեսողական ահազանգեր	_____				

Բաժնի վերլուծություն	Տեղեկատվական և հաղորդակցության մատչելիության տեսանկյունից իրականացված մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկված բոլոր պարզագույն թաքստոցներում տվյալ բաղադրիչը փաստացի բացակայում է և չի համապատասխանում մատչելիության նվազագույն պահանջներին: Վերլուծության ընթացքում արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները. 1. **Տեսողական մատչելի տեղեկատվության բացակայություն** Բոլոր պարզագույն թաքստոցում բացակայում են մեծ տառատեսակով, բարձր հակադրությամբ տեղեկատվական նյութեր, որոնք անհրաժեշտ են տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: 2. **Այլընտրանքային հաղորդակցության միջոցների բացակայություն** Չեն արձանագրվել պատկերային, խորհրդանշական կամ Բրայլյան նշումներ, որոնք կարող էին ապահովել տեղեկատվության հասանելիություն տարբեր կարիքներ ունեցող օգտվողների համար: 3. **Ձայնային և տեսողական ահազանգման համակարգերի բացակայություն** Արտակարգ իրավիճակների մասին իրազեկման համար նախատեսված ձայնային կամ տեսողական ահազանգեր պարզագույն թաքստոցում առկա չեն, ինչը կարող է լուրջ վտանգ ներկայացնել լսողության կամ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար: **Ընդհանուր գնահատական** Տեղեկատվական և հաղորդակցության մատչելիությունը գնահատվում է որպես **խիստ անբավարար** և պահանջում է համալիր միջամտություն՝ ներառական հաղորդակցման համակարգերի ներդրմամբ:

VII. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Չափանիշ	**Պարզագույն թաքստոց 1**	**Պարզագույն թաքստոց 2**	**Պարզագույն թաքստոց 3**	**Պարզագույն թաքստոց 4**	**Պարզագույն թաքստոց 5**
Լուսավորություն և օդափոխություն	Առկա են էլեկտրական լամպեր և պատուհաններ, որոնք ապահովում են տարածքի լուսավորություն ու օդափոխությունը: Առկա են դիզելային գեներատորներ:	Առկա չէ:	Առկա են էլեկտրական լամպեր և պատուհաններ, որոնք ապահովում են տարածքի լուսավորություն ու օդափոխությունը:	Առկա են էլեկտրական լամպեր և պատուհաններ, որոնք ապահովում են տարածքի լուսավորություն ու օդափոխությունը:	Առկա չէ:
Խմելու ջուր և սնունդ	Առկա են խմելու ջրի խողովակներ, որոնք համապատասխան աշխատանքների դեպքում կարող են ապահովվել տարածքը խմելու ջրով: Սնունդ առկա չէ:				
Պահեստային աջակցող սարքեր	Աջակցող սարքեր առկա չեն:				

Բաժնի վերլուծություն	Անվտանգության և օգտագործման հարմարության գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ պարզագույն թաքստոցներում առկա պայմանները հիմնականում չեն ապահովում անվտանգ և երկարատև օգտագործման համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները: Վերլուծության ընթացքում բացահայտվել են հետևյալ հիմնական խնդիրները. 1. **Լուսավորության և օդափոխության անհավասար ապահովում** Թեև որոշ պարզագույն թաքստոցում առկա են էլեկտրական լուսավորություն և պատուհաններ, մի մասում դրանք բացակայում են կամ չեն ապահովում բավարար լուսավորություն և օդափոխություն, ինչը սահմանափակում է տարածքի անվտանգ օգտագործումը: 2. **Սննդի և ջրի մշտական ապահովման բացակայություն** Չնայած խմելու ջրի խողովակների առկայությանը, պարզագույն թաքստոցում չկա ջրի և սննդի պատրաստի պաշար, ինչը արտակարգ իրավիճակներում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել: 3. **Աջակցող և օժանդակ սարքերի բացակայություն** Բոլոր պարզագույն թաքստոցում բացակայում են պահեստային կամ աջակցող սարքերը (առաջին օգնության միջոցներ, հենակներ, նստատեղեր հատուկ կարիքների համար), ինչը նվազեցնում է անվտանգության ընդհանուր մակարդակը: **Ընդհանուր գնահատական** Անվտանգության և օգտագործման հարմարության մակարդակը գնահատվում է որպես **անբավարար** և պահանջում է բարելավման միջոցառումների իրականացում:

VIII. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Չափանիշ	**Պարզագույն թաքստոց 1**	**Պարզագույն թաքստոց 2**	**Պարզագույն թաքստոց 3**	**Պարզագույն թաքստոց 4**	**Պարզագույն թաքստոց 5**		
Առանձին տարածքներ կանանց համար	Չկա առանձնացված տարածքներ կանանց համար, սակայն կոնստրուկտիվ կառուցվածքը հնարավորություն է տալիս հետագայում ունենալ նման սենյակներ:		Առկա չեն:	Չկա առանձնացված տարածքներ կանանց համար, սակայն կոնստրուկտիվ կառուցվածքը հնարավորություն է տալիս հետագայում ունենալ նման սենյակներ:	Չկա առանձնացված տարածքներ կանանց համար, սակայն կոնստրուկտիվ կառուցվածքը հնարավորություն է տալիս հետագայում ունենալ նման սենյակներ:		Առկա չեն:
Գաղտնիություն (վարագույր/բաժանարար)	_____						
Հիգիենիկ փաթեթներ	Մասամբ առկա են:		-	Մասամբ առկա են:	-		-

Բաժնի վերլուծություն	Գենդերային և պաշտպանական միջոցառումների տեսանկյունից իրականացված մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկված պարզագույն թաքստոցներում տվյալ բաղադրիչը հիմնականում չի համապատասխանում ներառականության և անվտանգության նվազագույն պահանջներին: Վերլուծության ընթացքում արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները. 1. **Կանանց համար առանձնացված տարածքների բացակայություն** Դիտարկված պարզագույն թաքստոցներում մեծ մասում բացակայում են կանանց համար նախատեսված առանձնացված և անվտանգ տարածքները: Թեև որոշ պարզագույն թաքստոցներում շինարարական կառուցվածքը տեսականորեն թույլ է տալիս ապագայում նման տարածքների ձևավորում, ներկայումս դրանք գործնականում առկա չեն: 2. **Գաղտնիության ապահովման միջոցների բացակայություն** Բոլոր պարզագույն թաքստոցներում բացակայում են գաղտնիությունը ապահովող վարագույրներ կամ բաժանարարներ, ինչը կարող է ստեղծել անհարմարություն հատկապես կանանց (հատկապես կերակրող կանանց համար, ինչի մասին նշում են նաև բնակիչները), դեռահասների և խոցելի խմբերի համար: 3. **Հիգիենիկ միջոցների սահմանափակ առկայություն** Հիգիենիկ փաթեթները առկա են միայն որոշ պարզագույն թաքստոցներում և այն էլ՝ մասամբ: **Ընդհանուր գնահատական** Գենդերային և պաշտպանական միջոցառումների մակարդակը գնահատվում է որպես **անբավարար** և պահանջում է նպատակային միջամտություններ՝ խոցելի խմբերի պաշտպանությունը և արժանապատիվ պայմանները ապահովելու համար:

IX. ԿԱՉՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Չափանիշ	
Անձնակազմի հմտություններ/ ծանոթ են մարդու իրավունքների և մատչելիության սկզբունքներին:	Մասամբ
Հաշմանդամություն ունեցողների ներգրավում	Բացակայում է
Համագործակցություն ՀԿ-ների հետ	Առկա է

Բաժնի վերլուծություն	Կազմակերպչական և ընթացակարգային տեսանկյունից իրականացված մոնիթորինգը և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները ցույց են տալիս, որ պարզագույն թաքստոցների և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգը համայնքում գործում է հիմնականում ռեակտիվ մոտեցմամբ և ամբողջությամբ չի ապահովում ներառական, իրավունքահեն և համակարգված կառավարում: Վերլուծության ընթացքում արձանագրվել են հետևյալ հիմնական խնդիրները. 1. **Տվյալների կառավարման և պլանավորման սահմանափակումներ** Քննարկման ընթացքում արձանագրվեց, որ համայնքում առկա են խոցելի խմբերի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ որոշ տվյալներ, սակայն դրանք լիարժեք, տարբերակված և կարիքահեն չեն: Համայնքը հիմնականում հիմնվում է Միասնական սոցիալական ծառայության տվյալների վրա, իսկ համայնքային մակարդակում բացակայում է միասնական և պարբերաբար թարմացվող տվյալների բազան, որտեղ կարտացոլվեն անձանց շարժունակության, ուղեկցման անհրաժեշտության և արտակարգ իրավիճակներում առաջնահերթ աջակցության կարիքները: 2. **Ներառական տարհանման պլանների թերի մշակում** Թեև Վարդենիս համայնքում առկա են տարհանման պլաններ և գործընթացները համակարգվում են Փրկարար ծառայության և համայնքապետարանի կողմից, քննարկումները ցույց տվեցին, որ այդ պլաններում բավարար չափով հաշվի չեն առնվում հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող կանանց և երեխաներ ունեցող կանանց առանձնահատկությունները: 3. **Անձնակազմի մասնագիտական կարողությունների սահմանափակ մակարդակ** Քննարկման մասնակիցների գնահատմամբ՝ համայնքապետարանի և պարզագույն թաքստոցների պատասխանատու անձնակազմը մասամբ է ծանոթ մարդու իրավունքների, ներառականության և մատչելիության սկզբունքներին: Բացակայում են համակարգված վերապատրաստումները հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցության, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում նրանց աջակցման վերաբերյալ:

	4. **Հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց ներգրավվածության բացակայություն որոշումների կայացման գործընթացում** Քննարկման արդյունքները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող անձինք և հատկապես հաշմանդամություն ունեցող կանայք չեն ներգրավվում արտակարգ իրավիճակների պլանավորման, վարժանքների և պարզագույն թաքստոցների կառավարման գործընթացներում: Նրանց մասնակցությունը սահմանափակվում է առանձին միջոցառումներով և չունի համակարգային բնույթ, ինչի հետևանքով որոշումները չեն արտացոլում իրական կարիքները: 5. **Համագործակցության ոչ համակարգված բնույթ** Թեև համայնքը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, այդ համագործակցությունը հիմնականում կրում է ծրագրային կամ իրավիճակային բնույթ և չի ձևակերպված որպես երկարաժամկետ և ռազմավարական գործընկերություն: **Ընդհանուր գնահատական** Կազմակերպչական և ընթացակարգային խնդիրների համակցված ազդեցության արդյունքում պարզագույն թաքստոցների կառավարումը և արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգը գնահատվում է որպես **մասամբ բավարար**: Սակայն անհրաժեշտ է ինստիտուցիոնալ բարեփոխում՝ ուղղված տվյալների կառավարման բարելավմանը, ներառական պլանավորմանը, անձնակազմի կարողությունների զարգացմանը և խոցելի խմբերի ակտիվ ներգրավմանը:

X. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ (1-5 ՄԻԱՎՈՐ)

Ցուցիչ	Պարզագույն թաքստոց 1	Պարզագույն թաքստոց 2	Պարզագույն թաքստոց 3	Պարզագույն թաքստոց 4	Պարզագույն թաքստոց 5
Մուտքի մատչելիություն	3	1	2	2	2
Կահույք և ներքին տարածք	3	1	3	1	2
Տեղեկատվական և հաղորդակցական մատչելիություն	2	1	2	2	2
Անվտանգություն և հարմարություն	3	1	2	2	2
Գենդերային բաղադրիչ	1	1	1	1	1
Կազմակերպչական մակարդակ	2	1	2	1	1

2020թվականի 44-օրյա պատերազմից հետո համայնքում սկսվել են նոր պարզագույն թաքստոցների ստեղծման աշխատանքներ, որոնք հողաշեն են, մի քանի մետր երկարությամբ, առանց մուտքի դռան և աստիճանների: Ակնադիտարական ուսումնասիրությունները բավարար են փաստելու համար, որ դրանք մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, սակայն միայն հողաշեն ճանապարհը հարթեցնելու, մուտքը և տարածքը ընդամենը մի քանի սանտիմետր լայնացնելով հնարավոր է ապահովել հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց մուտքը:

Պարզագույն թաքստոցների ենթակառուցվածքային բարեփոխումներ

Մոնիթորինգի ընդհանուր գնահատականը ցույց է տալիս, որ բոլոր 5 թաքստոցներում գենդերային բաղադրիչը ստացել է 1 միավոր, իսկ մատչելիությունը՝ անբավարար գնահատական:

1. Մատչելիության և հասանելիության առաջնահերթ բարելավումներ (կարճաժամկետ)

Առաջին փուլ (0–6 ամիս)

- Շարժական մետաղական թեքահարթակների տեղադրում:
- Բռնաձողերի տեղադրում բոլոր աստիճանների վրա:
- Մուտքերի մաքրում և ասֆալտապատման վերականգնում:
- Լուսավոր արտակարգ նշանների տեղադրում:
- Հիգիենիկ փաթեթների ապահովում:
-

2. Միջինաժամկետ բարելավումներ (6–18 ամիս)

- Առնվազն մեկ թաքստոցում լիարժեք սանհանգույցի կառուցում:
- Կանանց համար առանձնացված տարածքների ստեղծում:
- Վարագույրների և բաժանարարների տեղադրում:
- Արտակարգ ելքերի հստակ նշում:
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված աջակցող սարքերով համալրում:
-

3. Տեղեկատվական մատչելիություն

- Մեծ տառատեսակով ցուցանակներ:
- Պիկտոգրամներ:
- Տեսողական և ձայնային ահազանգման համակարգ:
- Պարզեցված հրահանգներ:
-

Գենդերային և պաշտպանական մեխանիզմներ

Մոնիթորինգը արձանագրում է կանանց առանձնացված տարածքների բացակայություն:

Առաջարկվում է.

1. Մշակել գենդերազգայուն թաքստոցների ուղեցույց:
2. Սահմանել հիգիենիկ նվազագույն փաթեթների ստանդարտ:
3. Ներառել կերակրող մայրերի և դեռահաս աղջիկների կարիքները:
4. Մշակել գենդերային բռնության ռիսկերի կանխարգելման ընթացակարգ:

Եզրակացություն

Սույն վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած ՀՀ կողմից ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի իրականացման ուղղությամբ իրականացվող քաղաքական և ծրագրային քայլերին, համայնքային մակարդակում շարունակում են պահպանվել ներառականության ապահովման համակարգային բացեր: Մասնավորապես, պարզագույն թաքստոցների մատչելիության մոնիթորինգի և ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող կանանց կարիքները բավարար չափով հաշվի չեն առնվում արտակարգ իրավիճակների պատրաստվածության, տարհանման պլանավորման և անվտանգության միջոցառումների իրականացման գործընթացներում:

Արձանագրված խնդիրները պայմանավորված են ինչպես ենթակառուցվածքային խոչընդոտներով, այնպես էլ ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակումներով, ներառականության վերաբերյալ գիտելիքների պակասով և համակարգված մոտեցման բացակայությամբ: Միևնույն ժամանակ, ՀՀ 2025–2027թթ. գործողությունների ազգային ծրագիրը կարևոր հնարավորություն է ստեղծում ներառականության սկզբունքները գործնականում կիրառելու և ապահովելու հաշմանդամություն ունեցող կանանց լիարժեք մասնակցությունը խաղաղության և անվտանգության գործընթացներում:

Ներկայացված առաջարկությունների իրականացումը կնպաստի պետական և համայնքային մակարդակներում ներառականության համակարգային ներառմանը, ծառայությունների և ենթակառուցվածքների մատչելիության բարելավմանը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության ընդլայնմանը որոշումների կայացման գործընթացներում: Սա, իր հերթին, կնպաստի առավել արդար, դիմակայուն և ներառական համայնքների ձևավորմանը՝ համահունչ ՀՀ միջազգային պարտավորություններին և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին:

Երկարաժամկետ հեռանկարում կարևոր է ապահովել ներառականության սկզբունքների հստակ և չափելի ներառումը ինչպես գործող ազգային ծրագրի իրականացման գործընթացում, այնպես էլ հետագա գործողությունների ծրագրերի մշակման փուլերում՝ երաշխավորելու համար, որ խաղաղության և անվտանգության քաղաքականությունները լինեն հասանելի և արդյունավետ բոլորի համար՝ առանց բացառության:

Առաջարկություններ ուղղված ՀՀ կառավարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացման 2025–2027թթ.ազգային գործողությունների ծրագրի իրականացման ներառականությունն ապահովման համար

ՀՀ 2025–2027 թվականների ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ ԳԱԾ) սահմանում է կանանց մասնակցության, պաշտպանության, կանխարգելման և վերականգնման ուղղությամբ պետական քաղաքականության առաջնահերթությունները: Չնայած ծրագրում ընդգծվում է ներառականության կարևորությունը և հաշմանդամություն ունեցող կանանց ճանաչումը որպես թիրախային խումբ, իրականացված համայնքային մոնիթորինգի, ֆոկուս խմբային քննարկումների և պարզագույն թաքստոցների մատչելիության գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ներառականության բաղադրիչը գործնական մակարդակում դեռևս համակարգված և լիարժեք չի ապահովվում:

Այս համատեքստում անհրաժեշտ է ապահովել, որ Գործողությունների ազգային ծրագրի իրականացման համար պատասխանատու բոլոր դերակատարները՝ պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, իրենց գործողությունները դարձնեն մատչելի և ներառական՝ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար:

Առաջարկություններ ուղղված Կառավարությանը

1. **Քաղաքական և ռազմավարական մակարդակ**

1.1. Հաշմանդամություն ունեցող կանանց ներառումը «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» (ԿԽԱ) ազգային օրակարգում

- Հայաստանի ԿԽԱ ազգային գործողությունների ծրագրում հստակ ամրագրել հաշմանդամություն ունեցող կանանց որպես առանձին թիրախային խումբ:
- Սահմանել չափելի ցուցիչներ՝ նրանց մասնակցության, պաշտպանության և առաջնորդության խթանման համար:
- Ներառել հաշմանդամություն ունեցող կանանց կազմակերպությունները ծրագրի մշակման և մոնիթորինգի գործընթացներում:

1.2. Օրենսդրության համահնչեցում

- Վերլուծել պաշտպանության, արտակարգ իրավիճակների, տեղահանման և վերականգնման ոլորտների օրենսդրությունը՝ պարզելու, թե որքանով է այն ներառում գենդերային և հաշմանդամության փոխհատվող մոտեցում:
- Ապահովել, որ հակամարտությունների և ճգնաժամերի ժամանակ կիրառվող իրավական մեխանիզմները հատուկ դրույթներ ունենան հաշմանդամություն ունեցող կանանց պաշտպանության համար:

2. Մասնակցություն և առաջնորդություն

2.1. Որոշումների կայացման գործընթացներում ներգրավում

- Պաշտպանության, անվտանգության, խաղաղաշինության և համայնքային ճգնաժամային կառավարման մարմիններում ապահովել խորհրդատվական մեխանիզմներ՝ հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությամբ:
- Տեղական ինքնակառավարման մարմիններում ձևավորել ներառական անվտանգության խորհուրդներ:

2.2. Առաջնորդության զարգացում

- Իրականացնել կարողությունների զարգացման ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող կանանց առաջնորդական, բանակցային և քաղաքական մասնակցության հմտությունների ամրապնդմանը:
- Աջակցել նրանց ներգրավմանը խաղաղաշինության նախաձեռնություններում և հանրային երկխոսություններում:

3. Պաշտպանություն և անվտանգություն

3.1. Գենդերային և հաշմանդամության զգայուն պաշտպանական մեխանիզմներ

- Ճգնաժամային իրավիճակներում (պատերազմ, տեղահանում, աղետներ) ապահովել մատչելի ապաստարաններ, թաքստոցներ, տեղեկատվություն և ծառայություններ:
- Բռնության կանխարգելման և արձագանքման համակարգերում ներդնել հաշմանդամության ներառական ստանդարտներ:

3.2. Մատչելի տեղեկատվություն

- Արտակարգ իրավիճակների հաղորդագրությունները տարածել մատչելի ձևաչափերով (ժեստերի լեզու, պարզ լեզու, լուսագրեր, աուդիո ձևաչափ):
- Զարգացնել վաղ ահազանգման ներառական համակարգեր:

4. Տվյալներ և հետազոտություն

4.1. Փոխհատվող տվյալների հավաքագրում

- Հավաքագրել սեռով և հաշմանդամությամբ տարանջատված տվյալներ՝ անվտանգության, տեղահանման, բռնության և խաղաղաշինության գործընթացներում:
- Զարգացնել ապացույցահեն քաղաքականություն՝ հիմնված իրական կարիքների վրա:

4.2. Հետազոտությունների խթանում

- Աջակցել ակադեմիական և քաղաքացիական հետազոտություններին՝ ուսումնասիրելու հակամարտությունների ազդեցությունը հաշմանդամություն ունեցող կանանց վրա:
- Մշակել ազգային զեկույցներ ԿԽԱ և հաշմանդամության փոխհատվող թեմայով:

5. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

5.1. Պետական ծառայողների վերապատրաստում

Պաշտպանության, ոստիկանության, սոցիալական պաշտպանության և տեղական կառավարման մարմինների աշխատակիցների համար իրականացնել վերապատրաստումներ՝ հաշմանդամության ներառական և իրավունքահեն մոտեցումների վերաբերյալ:

5.2. Միջոլորտային համագործակցություն

- Ստեղծել համագործակցության հարթակներ պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների միջև:
- Ապահովել ֆինանսական ռեսուրսների հատկացում ներառական WPS նախաձեռնությունների համար:

6. Վերականգնում և հետկոնֆլիկտային փուլ

- Վերականգնման և վերակառուցման ծրագրերում պարտադիր ներառել մատչելիության և ներառականության չափանիշներ:
- Տնտեսական վերաինտեգրման ծրագրերում ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց աշխատանքի և ձեռնարկատիրության հնարավորություններ:
- Հոգեբանական աջակցության ծառայությունները դարձնել մատչելի և գենդերազգայուն:

Առաջարկվում է Ազգային ծրագրին կից մշակել և հաստատել ներառականության ապահովման պարտադիր չափորոշիչներ և ցուցիչներ, որոնք պետք է կիրառվեն ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր միջոցառումների, ծրագրերի և ծառայությունների դեպքում: Այս չափորոշիչները պետք է ներառեն՝

- Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների բովանդակալի մասնակցության ապահովում
- ֆիզիկական մատչելիության ապահովում (թեքահարթակներ, մատչելի մուտքեր և սանհանգույցներ),
- Հաղորդակցական, կրթական և իրազեկման նյութերի մատչելիության ապահովում (ժեստերի լեզվի թարգմանություն, լուսագրեր, հեշտ ընթերցվող նյութեր, նախատեսվող ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի միասնական էլեկտրոնային տեղեկատվական հարթակի մատչելիության չափանիշներ
- տեղեկատվական մատչելիություն (թվային մատչելիություն՝ միջազգային չափանիշներին համապատասխան),
- խելամիտ հարմարեցումների տրամադրում՝ ըստ անհատական կարիքների:

Համակարգել ազգային մակարդակում տվյալների հավաքագրում՝ հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ՝ խաղաղության, անվտանգության և մարդասիրական օգուտների ոլորտներում:

Առաջարկվում է ներդնել ներառականության գնահատման չափելի ցուցիչներ, որոնք թույլ կտան գնահատել հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցության և ներառման մակարդակը:

Մասնավորապես, առաջարկվում է պարտադիր դարձնել տվյալների հավաքագրումը հետևյալ ցուցանիշներով՝

- հաշմանդամություն ունեցող կանանց մասնակցությունը ծրագրերին և միջոցառումներին,
- իրականացված միջոցառումների մատչելիության մակարդակը,
- տրամադրված խելամիտ հարմարեցումների տեսակները:

Առաջարկվում է իրականացնել պետական և համայնքային ծառայողների համակարգված վերապատրաստումներ՝ հետևյալ թեմաներով.

- ներառական ճգնաժամային արձագանք,
- հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանություն,
- ներառական տարհանման և պաշտպանության մեխանիզմներ:

Սա կնպաստի ներառական մոտեցումների ինստիտուցիոնալացմանը պետական համակարգում:

Սահմանել ներառականության չափորոշիչների կիրառումը որպես պարտադիր պահանջ՝ այդ նպատակով պետական բյուջեում նախատեսելով առանձին, նպատակային և բավարար ֆինանսավորում, ինչպես նաև ապահովելով համապատասխան վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմներ:

Առաջարկություններ ՏԻՄ-երի համար

Տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվում է տեղական գործողությունների ծրագրերում ներառել հատուկ միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող կանանց անվտանգության և մասնակցության ապահովմանը:

1. Քաղաքական և ծրագրային մակարդակ

1.1. Համայնքային ռազմավարություններում ներառականության ամրագրում

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրերում (ՀԶԾ) ներառել առանձին բաժին՝ հաշմանդամություն ունեցող կանանց անվտանգության, մասնակցության և պաշտպանության վերաբերյալ:

- Համայնքային անվտանգության և արտակարգ իրավիճակների պլաններում ամրագրել հաշմանդամություն ունեցող կանանց հատուկ կարիքները:

Սահմանել չափելի ցուցիչներ (օր.՝ որոշումների կայացման մարմիններում հաշմանդամություն ունեցող կանանց տոկոս, մատչելի ապաստարանների քանակ և այլն):

2. Մասնակցություն և որոշումների կայացում

2.1. Խորհրդատվական մեխանիզմներ

- Ստեղծել համայնքային խորհրդատվական խմբեր՝ հաշմանդամություն ունեցող կանանց և նրանց կազմակերպությունների մասնակցությամբ:
- Ապահովել նրանց ներգրավվածությունը հանրային լսումներում, բյուջետային քննարկումներում և զարգացման ծրագրերի մշակման փուլում:

2.2. Մատչելի հանրային գործընթացներ

- Հանրային քննարկումները կազմակերպել ֆիզիկապես և հաղորդակցական առումով մատչելի վայրերում:
- Ապահովել ժեստերի լեզվի թարգմանություն, ենթագրեր, պարզ լեզվով տեղեկատվություն:

3. Պաշտպանություն և ճգնաժամային արձագանք

3.1. Արտակարգ իրավիճակների ներառական պլանավորում

- Համայնքում մշակել խոցելի անձանց քարտեզագրում՝ ներառելով հաշմանդամություն ունեցող կանանց:
- Տարհանման և ապաստարանների պլաններում ապահովել մատչելի ենթակառուցվածքներ (մուտքեր, սանհանգույցներ, տեղեկատվություն):
- Վաղ ահազանգման համակարգերը դարձնել բազմաֆորմատ (SMS, ձայնային հաղորդագրություն, տեսանյութ ժեստերի լեզվով):

3.2. Բռնության կանխարգելում

- Համայնքային սոցիալական ծառայություններում ներդնել գենդերազգայուն և հաշմանդամության ներառական մոտեցում:
- Ստեղծել անվտանգ հաղորդման մեխանիզմներ՝ բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց համար:

4. Ծառայությունների մատչելիություն

4.1. Սոցիալական և առողջապահական ծառայություններ

- Համայնքային սոցիալական աշխատողների վերապատրաստում՝ հաշմանդամության իրավունքահեն մոտեցմամբ:
- Ապահովել, որ համայնքային առողջապահական և հոգեբանական ծառայությունները հասանելի և մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող կանանց համար:

4.2. Տնտեսական հզորացում

- Համայնքային փոքր դրամաշնորհային ծրագրերում նախատեսել հատուկ բաղադրիչ հաշմանդամություն ունեցող կանանց ձեռնարկատիրության համար:
- Աջակցել նրանց ներգրավմանը զբաղվածության ծրագրերում և համայնքային աշխատանքներում:

5. Տվյալների հավաքագրում և մոնիթորինգ

- Հավաքագրել սեռով և հաշմանդամությամբ տարանջատված տվյալներ համայնքային ծրագրերի շահառուների վերաբերյալ:
- Տարեկան հաշվետվություններում անդրադառնալ ներառականության ցուցիչներին:
- Համագործակցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ գնահատելու ներառման մակարդակը:

6. Իրազեկում և մշակութային փոփոխություն

- Կազմակերպել համայնքային իրազեկման արշավներ՝ հաշմանդամություն ունեցող կանանց առաջնորդության և խաղաղաշինական դերի վերաբերյալ:
- Նշել միջազգային օրերը (օր.՝ դեկտեմբերի 3)՝ համայնքային ներառական նախաձեռնություններով:
- Աջակցել հաշմանդամություն ունեցող կանանց հաջողության պատմությունների հանրայնացմանը:

Հաշվի առնելով իրականացված մոնիթորինգի արդյունքները, որոնք ցույց են տալիս թաքստոցների մատչելիության զգալի բացեր, առաջարկվում է՝

- իրականացնել բոլոր թաքստոցների մատչելիության գնահատում,
- մշակել թաքստոցների մատչելիության բարելավման փուլային ծրագիր,
- ապահովել թաքստոցների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի անձանց համար:

Առաջարկվում է ստեղծել համայնքային խորհրդատվական խմբեր՝ ներառելով հաշմանդամություն ունեցող կանանց և նրանց ներկայացնող կազմակերպությունները՝ տեղական անվտանգության և պաշտպանության ծրագրերի մշակման և մոնիթորինգի գործընթացում:

Առաջարկություններ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին առաջարկվում է ապահովել, որ իրենց ծրագրերը լինեն մատչելի և ներառական՝

1. Ծրագրային և ռազմավարական ուղղություն

1.1. Փոխհատվող մոտեցման ամրագրում

- Կանանց իրավունքների կամ խաղաղաշինության ոլորտում գործող ՀԿ-ները իրենց ռազմավարություններում հստակ ներառեն հաշմանդամություն ունեցող կանանց որպես առանձին թիրախային խումբ:
- Հաշմանդամության ոլորտում գործող ՀԿ-ները ծրագրերում ներառեն գենդերային բաղադրիչ և խաղաղաշինական հեռանկար:
- Զարգացնել ծրագրեր, որոնք միաժամանակ անդրադառնում են գենդերային հավասարությանը, սոցիալական ներառմանը և հակամարտությունների կանխարգելմանը:

2. Մասնակցություն և առաջնորդություն

2.1. Հաշմանդամություն ունեցող կանանց առաջնորդության զարգացում

- Ստեղծել առաջնորդության կամ մենթորական ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող կանանց քաղաքական և հանրային մասնակցությանը:
- Աջակցել նրանց ներգրավմանը տեղական և ազգային խաղաղարար նախաձեռնություններում:

2.2. Կանանց ձայնի հզորացում

- Ապահովել, որ համայնքային երկխոսություններում, մեդիա հարթակներում և քաղաքական քննարկումներում ներկայացված լինեն հաշմանդամություն ունեցող կանանց տեսակետները:
- Զարգացնել անձնական պատմությունների և վկայությունների արշավներ՝ հասարակական կարծիքի փոփոխության նպատակով:

3. Պաշտպանություն և անվտանգություն

3.1. Բռնության կանխարգելում

- Մշակել ծրագրեր, որոնք հատուկ ուղղված են հակամարտության և հետկոնֆլիկտային իրավիճակներում հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը:
- Ստեղծել անվտանգ և մատչելի հաղորդման ուղիներ՝ զոհերի համար:

3.2. Ճգնաժամային արձագանք

- ՀԿ-ները մշակեն ներքին ներառական արձագանքման ուղեցույցներ՝ արտակարգ իրավիճակների ժամանակ:
- Ապահովել, որ մարդասիրական օգնության ծրագրերը հասանելի լինեն տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող կանանց համար:

4. Կարողությունների զարգացում

4.1. Վերապատրաստումներ

- Կազմակերպել վերապատրաստումներ խաղաղաշինության, միջնորդության, կոնֆլիկտների կառավարման թեմաներով՝ հարմարեցված հաշմանդամություն ունեցող կանանց կարիքներին:
- Զարգացնել ՀԿ-ների աշխատակազմի կարողությունները՝ հաշմանդամության իրավունքահեն և գենդերազգայուն մոտեցումների ուղղությամբ:

4.2. Ներառական կազմակերպչական քաղաքականություններ

- Ապահովել, որ կազմակերպությունների ներքին կանոնակարգերը ներառեն հավասար հնարավորությունների և մատչելիության սկզբունքներ:
- Բյուջեներում նախատեսել մատչելիության ծախսեր (թարգմանություն, լուսագրեր, մատչելի տարածքներ և այլն):

5. Գործընկերություն և շահերի պաշտպանություն

5.1. Կոալիցիաների ստեղծում

- Միավորել կանանց, հաշմանդամության և խաղաղաշինության ոլորտներում գործող ՀԿ-ների ջանքերը:
- Ստեղծել համատեղ շահերի պաշտպանության հարթակներ՝ ազգային քաղաքականությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով:

5.2. Ազգային և միջազգային օրակարգերի ազդեցություն

- Ներգրավվել «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ազգային գործողությունների ծրագրի մշակման և մշտադիտարկման գործընթացներին:
- Միջազգային կառույցներին ներկայացնել ստվերային զեկույցներ՝ հաշմանդամություն ունեցող կանանց իրավիճակի վերաբերյալ:

6. Տվյալներ և հետազոտություն

- Իրականացնել հետազոտություններ հակամարտությունների ազդեցության վերաբերյալ հաշմանդամություն ունեցող կանանց վրա:
- Հավաքագրել սեռով և հաշմանդամությամբ տարանջատված տվյալներ ծրագրերի շահառուների մասին:
- Տարածել քաղաքական առաջարկներ՝ հիմնված ապացույցների վրա:

Առաջարկություններ՝ հաջորդ ազգային գործողությունների ծրագրի մշակման համար

Առաջարկվում է, որ հաջորդ ազգային գործողությունների ծրագրում ներառականությունը դիտարկվի որպես համակարգային և խաչաձև առաջնահերթություն:

Մասնավորապես՝

- սահմանել ներառականության հստակ նպատակներ և ցուցիչներ,
- նախատեսել համապատասխան ֆինանսավորում,
- ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց ակտիվ մասնակցությունը ծրագրի մշակման գործընթացում:

Մշտադիտարկման Համար Ռեսուրսներ

ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1325 բանաձև

https://www.un.org/shestandsforpeace/sites/www.un.org.shestandsforpeace/files/wps_sres1325.pdf

ՄԱԿ Անվտանգության խորհրդի 2475 բանաձև
https://docs.un.org/en/S/RES/2475%20(2019)

Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձեվի դրույթների իրականացման Հայաստանի Հանրապետության գործողությունների 2022-2024 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը
https://www.arlis.am/hy/acts/163530

Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման Հայաստանի Հանրապետության գործողությունների 2025-2027 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV8F-5C45-93C3-9413/1760.1.pdf

Գրավոր տեղեկատվություն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից

Գրավոր տեղեկատվություն ՀՀ Արտաքին գործերի նախարարությունից

Գրավոր տեղեկատվություն ՀՀ ներքին գործերի նախարարությունից

Գրավոր տեղեկատվություն ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունից

Ֆոկուս խմբային հանդիպումներ

Հավելվածներ

Ֆոկուս խմբի վարման ուղեցույց

Հարցաշար Վարդենիս համայնքի ՏԻՄ և փրկարար ծառայության ներկայացուցիչների համար

Ֆոկուս խմբային քննարկում ՀԿ-ների, դպրոցների, քոլեջների ներկայացուցիչների և երիտասարդների մասնակցությամբ